Հյուրանոցային և բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է Կենտրոն վարչական շրջանում՝ Տերյան-Պուշկին փողոցների հատման կետում կառուցել հյուրանոցային և բնակելի բազմաֆունկցիոնալ համալիր: Տարածքը գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածում, որտեղ զարգացած են զբոսաշրջային և տրանսպորտային ենթակառուցվածքները:
Համալիրի առաջին 10 հարկերում նախատեսվում է կառուցել «Մարիոթ Քորթյարդ» աշխարհահռչակ ցանցին պատկանող հյուրանոց, որն այցելուներին կառաջարկի շուրջ 174 հարմարավետ համարներ, ռեստորան, սրճարան, ֆիթնես/սպա կենտրոն, մանկական խաղահրապարակ, կոնֆերանս դահլիճներ, ստորգետնյա ավտոկայանատեղ՝ նախատեսված 113 մեքենայի համար: Բազմաֆունկցիոնալ համալիրի վերին 10 հարկերում նախատեսվում է կառուցել թվով 80 բնակարան:

Տեխնիկական ցուցանիշներ

Ընդհանուր մակերեսը կազմում է 25.000 քմ, հյուրանոցային համալիրի մակերեսը՝ 9404 քմ, բնակելի համալիրի մակերեսը՝ 9000 քմ:
Հարկայնությունը՝ 4 ստորգետնյա և 22 վերգետնյա հարկ:

Ծրագրի ժամկետներ

Հյուրանոցը շահագործման կհանձնվի 2019 թվականին:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից: Կառուցապատողը «Միլենիում քոնսթրաքշն» ՍՊԸ-ն է:



Ներկա իրավիճակ

Շինարարական աշխանքներն ընթացքի մեջ են, ավարտական փուլում են նկուղային հարկերի կառուցման աշխատանքները: